

## Տեղեկատվություն

<<Դիլիջան>> ԱՊ ՊՈԱԿ-ի 2014թ-ի նոյեմբեր ամսվա կատարված աշխատանքները

Նոյեմբեր ամսին <<Դիլիջան>> ԱՊ ՊՈԱԿ-ի պահպանության բաժնի կողմից իրականացնել է 4 հա հողի նախապատրաստման աշխատանքներ՝ <<Դիլիջան>> տեղամասում 1 հա, <<Շամախյան>> տեղամասում 1 հա, <<Հաղարծին>> տեղամասում 2 հա: <<Հաղարծին>> տեղամասի տարբեր պահաբաժիններում հայտնաբերվել և արձանագրվել են ապօրինի հատված 31 հատ ծառ, որոնց համար կազմվել են 10 հատ անտառխախտման արձանագրություն: Կազմված անտառխախտման արձանագրությունները ներկայացվել են ՏԲՊՏ՝ ըթացք տալու: Անտառխախտումներից զերծ մնալու նպատակով տեղամասերում կազմակերպվում են շուրջօրյա հերթապահություններ:

13.11.2014թվականին ավարտվել է <<Դիլիջան>> ազգային պարկ ՊՈԱԿ-ի 2014թվականի աշնանային հերթական ստուգողական ստուգումները, արդյունքները ամփոփվել և ուղարկվել են ՀՀ բնապահպանության նախարարություն: Աշնանային հերթական և ստուգողական ստուգումների ընթացքում հայտնաբերած անտառխախտումների վերաբերյալ տեղամասերի պետերին տրվել է հանձնարարություն 10 օրյա ժամկետում հայտնաբերել անտառխախտողներին և վերականգնել անտառին հասցրած վնասը, հակառակ դեպքում անտառին հասցրած վնասը կվերականգվի տեղամասի տեսուչի կամ տեղամասի պետի կողմից:

Ռեկրեացիայի և գիտական բաժինների կողմից ավարտվել են <<Դիլիջան>> ազգային պարկ ՊՈԱԿ-ի 2014 թվականի աշխատանքային ծրագրով նախատեսված Էկոտուրիզմի գովազդման նպատակով <<Եծանվային երթուղու>> վերաբերյալ բուկլետի տպագրման, <<Դիլիջան>> ԱՊ-ի տարածքի <<Ժայռերը և բնական հուշարձանները>> բուկլետի և <<Էկոտուրիստական 11 երթուղիների>> վերաբերյալ գրքուկի, ինչպես նաև <<Դիլիջան>> ԱՊ-ի <<Ֆլորայի միամյա և երկամյա բույսերը>> գրքուկի լրամշակված տարբերակի տպագրման աշխատանքները որոնց օրինակները կներկայացվեն Ձեզ:

ՀՀ բնապահպանության նախարարի համաձայնությամբ ԱՊ-ի <<Դիլիջան>>, <<Հաղարծին>> <<Շամախյան>>, տեղամասերը վերանվանվում են <<Դիլիջան տեղամասի>>, <<Հաղարծին տեղամասի>>, <<Շամախյան տեղամասի>> մասնաճյուղեր իսկ <<Գոշ>> տեղամասը կիսվելով կդարձա <<Գոշ տեղամասի >> և <<Աղավնավանք տեղամասի >> մասնաճյուղեր: Ներկայումս մշակվում է նշված մասնաճյուղերի կանոնադրությունը հաստատման ներկայացնելու համար: Կանոնադրության պետական հաշվառումը ստանալուց հետո կկատարվեն կանոնադրությունից բխող բոլոր անհրաժեշտ փոփոխություններ և լրացումները:

ԱՊ-ի տարացքում շարունակվում է 2014թ-ի ԱՊ-ի պլան- ծրագրով նախատեսված վառելիքայտի իրացումը՝ հորդառատ անձրևների հետևանքով տապալված և քամատապալ ծառերից առաջացած փայտանյութից:

Շարունակվում են 2015-2019թթ-ի Կառավարման պլանի նախագի մշակման աշխատանքները:

Ավարտին է մոտենում Կովկասի բնության հինմադրամի և <<Դիլիջան>> ազգային պարկ ՊՈԱԿ-ի միջև կնքված դրամաշնորհի պայմանագրի համաձայն՝ <<Դիլիջան>> ազգային պարկի <<Այցելուների կենտրոն>> մասնաշենքի վերանորոգման աշխատանքները: <<Դիլիջան>> ազգային պարկ ՊՈԱԿ-ը իր ներդրումն է ունեցել համահայկական հեռուստամարաթոնին, որին նվիրաբերել է 50000 ՀՀ դրամ:

Տնօրենի ժ/պ  Ս.Մուրադյան